

Խ Ա Ղ.¹⁾

(Պատկերներ գիտից)

III

Բոկոտն ու կիսամերկ, աղտոտ, այրուած, անդիկի պէս շարժուն և աշխոյժ՝ միմեանց ետևից, զրէթէ գլորուելով էր, որ 5—50 բոկից յետոյ, ամէն կողմից ժողովուեցին մեր նստած տեղը:

Անպատճառ մի-մի ճիպոտ ձեռքերին, շատերը քնդ ծամելիս, մի քանիսն էլ մաստակ՝ փուռեցին խոտերի վրայ: Տելօն նրանց մէջ տեղում կանգնած՝ սպասում էր որ սարալանջերից դէպի մեզ վաղողներն էլ հասնէին:

— Դէհա, դէհա... անում էր նա— ադա վազէք է է...

Ու գալիս էին: Քիչ յետոյ, համբեցի մինչև քսան մանուկ՝ զանազան հասակի— 10-ից մինչև 15 տարեկան:

Ամէնքը նախ վարմացած՝ ինձ էին նայում, յետոյ իրար մօտենում փսփսալով: Անշուշտ իմ ներկայութիւնը տարօրինակ էր իրանց. ինչ կար, ինչ ու էի եկել և ես էի արդեօք ձայն տուողը:

Տելօն կցկտուր ու բարձր, յայտնում էր եկողներին, որ «պ. Երուանդը հէնց ընէնց, եկել ա տենայ թէ մենք ո՞նց ենք տաւարը պահում». կամ— «ադա, դէ ի՞նչ կայ, եկել ա՛ եկել, խօ մեզ չի՞ ուտելու». և կամ— «դէ լաւ ա, ղոնաղ ա եկել. մենք էլ մէկ օր

1) Տես «Մուրճ» № 10, նոյեմբեր, 1905.

Նրա բաղը կերթանք, մեզ սեմիչկա, ⁽¹⁾ եա քեալամի կոթ կուտացնի... ընէնց չի, պ. Երուանդ...:

Ու այսպէս, ամէնքին ժողովում էր շուրջը, բացատրում, որ պիտի խաղ կազմեն:

Քիչ յետոյ, երբ բաւական վիճել ու գոռգոռացել էին, խաղն սկսեցին:

Տելօն ու Քանազն եկան մօտս նստեցին, մանուկները ցան ու ցրիւ եկան, նստոտեցին, կանգնած մնացին, ու Տազին, որ գզիւրն էր, փայտը ձեռքին ման էր գալիս ամէնքի մէջ:

—Ադա էյ, քիւրդ Տազի, ձայնեց մէկը—ինձ չըբռնես, թէ չէ, Աստուած ա վկայ, գեղամիջում կը բռնեմ ընէնց մէկ կը տամ, որ սաղ օրը վնգստաս...

—Փիէ... արեց Տազին—էդ եանի խնդ էլա... Որին ասին՝ բռնելու եմ:

—Որ բռնես ու գզիւր հալովդ լաւ ծեծ ուտես, Գնց քէֆիդ կը գայ. ծիծաղեց մէկը:

—Գզիւր ա, նկատեց մի ուրիշը—գլխին էլ կը բամփաչեն, ձեռքն էլ կը կոտրեն... Պիտի դիմանայ...

—Չէ, ախպէ՛ր, արեց Տազին—թէ Թափուելու էք ծեծէք, էն ա չըխաղամ:

—Ադա բանիդ կաց, բանիդ... կանչեց Նրան Տելօն —մագամ ստարշինան մեռել ա, որ գզըին ծեծեն...

Յետոյ աչք ածեց բոլորին, շտկեց իրան, նայեց ինձ և երբ գտաւ որ ամէն ինչ տեղին էր, ճշաց.

—Մի քիչ զրաղ քաշուէք, այ ադա... Ով ուզում ա գանգատաւոր ըլի՝ թող մէյդան գայ:

Արևը հետգհետէ բարձրանում էր բլրի ետեից, ստուերը քաշուում—կարճանում: Տեղներիցս սակայն չըշարժուեցինք: Հովանոց ունէի. բացի, թիկն տուի խտտերի վրայ, գլխիս կողմից արևի ճառագայթների դէմն առի և այնուհետև լուռ՝ միմեայն հանդիսատես մնացի մանուկների խաղին:

(1) Արևածաղկի սերմ.

Երեք—չորս հոգի մինչ այդ, միմեանց մօտ եկած, ըստ երևոյթին պատրաստուած էին դանդատի նիւթը. իսկ Տելօն և Քանազը պաշտօնական դիրք ստացել՝ նայում էին հպարտ, մտնում իրանց դերի մէջ։ Նոյն իսկ, կատարեալ լինելու համար, մանուկը սկսեց իսկական ստարշինայի ձևերն ստանալ—կկոցել աչքերը, քիթը վեր քաշել, ձեռքի ճիպոտով, իբր մտրակ, ոտը ծեծել։

—Բո՛ւ, ա՛յ տղայ, գոչեց յանկարծ Տելօն, պահ մի տեղիցը դուրս գալով—Բա պիսէրը... ըտէնց էլ բան էք տեսել. մոռացել ենք պիսերը։

—Էս մէկ անգամն էլ թող պիսէր չլլի. նկատեց Քանազը։

—Ո՞նց... չէ, ստարշինան առանց պիսէրի, ոնց որ աւագակը՝ առանց թուանքի... Ա՛յ, Պետին թող ըլի պիսէրը...

—Հա, հա, Պետին թող ըլի... ձայնեցին ամէնքը ծիծաղելով և դարձան եկուր մանուկներից մէկին, որի վրայ մինչև այդ՝ ուշադրութիւն չէի դարձրել։

Տասնամեայ, գուցէ քիչ աւելի տարիքով մի շուտիկ էր այդ, որ շատ յիշեցնում էր շարժուն միմիկա ունեցող լուրջ կոմիքի։ Կարծես ահա բերնիցը մի սրախօսութիւն պիտի դուրս թոնէր, ինքը—ասողը չըպիտի ծիծաղէր և խոհները պիտի թուլանային։

Հագածից մինչև կեցուածքը՝ ծիծաղաշարժ էր։ Մի կարճ, կտրտուած արխալուղ, վրայից՝ խոշոր ծակերով երկար, մինչև գետին հասնող լայն չուխա (անշուշտ հօր դէն ձգածն էր), գլխին ահագին գզգզուած, հողոտ ու աղտոտ փափախ, որ նա ցցել էր ծոծրակի վրայ և յաջողուած էր պահել այնտեղ։ Կօշիկ չունէր. մի ինչ որ կասկածելի գոյնով շորի կտոր, վարի կողմից ատամնաձև ցնցոտիացած՝ վարտիքի տեղ էր ծառայում նրան։

Արտակետորոնը դէմքն էր. այնքան խորամանկ հայեացք կար աչքերի մէջ երբ նրան յայտնեցին թէ պիսէր էր դառնալու, որ մոռացայ մանուկ լինելը։ Հոգին ամբողջ գծուած էր ակնարկի ու բերնի շուրջը։

քը պարզեց դէպի նրանց ու խորամանկ ժպիտով ասաց.

— Դէսը տուէք խնդիրք գրելու փողը՝ առանց խնդրի էլ եօլա տանենք... ըտենց զակօն կայ:

— Ըտենց զա՛կօն (¹) կայ... քիթը վեր քաշեց Տեւրօն—բաս 'հանէք մէկ-երկու մանէթ տուէք ու ասէք խնդիրքներդ:

Գանգատաւորները, որ սկզբից գիտէին թէ ստարշինայի մօտ առանց փողի գնալ չէր կարելի—մի բոլոր տերեւներ էին ժողովել ձեռքներուս. երկու հատը հանեցին և պիսէրի պարզած ափը դրին:

— Երկուսը քիչ ա. ասաց Պետին—վօլօստնի պիսէր եմ ես, ձեր հարբան տէրտէրը եա քօռ տիրացուն չեմ... երկուսն էլ տուէք...

— Վա, չորս մանէթ. կանչեց գանգատաւորներին մէկը—էդ խօ ջլիս թաւան ա...

— Զէնդ... կանչեց նրա վրայ ստարշինան—զակօնի դէմ ջուռաթ շա՛նես (²) խօսալը... Զակօնը որ կայ, (քիթը վեր քաշեց) զակօն ա... (աչքը կկոցեց) ու էլ՝ հետ որ զակօնը զակօն ա, (քիթը վեր քաշեց) պիտի պահենք ու կատարենք... իմացա՞ք, ա շան տղերք, և կը դադեմ թէ չէք իմացել...

— Իմացանք, հնց չիմացանք, գօլօվա... Զակօնը որ կայ՝ զակօն ա...

— Զակօնն էլ՝ էլհետ զակօն ա...

— Հրամանք ես...

— Մրանց խնդիրքը գրիր, պիսէր:

— Էս սհաթիս... Որիցն ա ձեր գանգատը:

— Չորս հոգուց:

— Փիէ... արեց Բանազը—ի՞նչ խաբար ա, տօ...

— Դու ըստեղ հլա ձէն չունես, քեօխվա. ասաց նրան Տեւրօն—հլա գործը քեզ չի հասել:

— Ի՞նչն ա շատ. նեղացաւ պիսէրը—պտի էլ շատ

(¹) օրէնք. (²) Զհամարձակուես.

հոգի ըլէ՛ր՝ որ դալամս եղալէն գրէր... Ասէ՛ք, ո՛րից էք գանգատաւոր:

—Շուն-ուտողինց Սաքօից... Գորտ-ծեծողինց խոզ Կարապետից...

Ընդհանուր ծիծաղը՝ բարձրաձայն քրքիջի փոխուեց:

—Կաց, կաց... ընդհատեց պիսէրը, որ փայտը արագութեամբ, ծայրը միշտ թքոտելով՝ շարժում էր ծընկան դրած լայն տերեւի վրայ:

—էն մեկալոնքը չասե՛նք. հարցրեց գանգատաւորը:

—Ո՛ւնց չէ... Կարաս՝ հլա մէկ-երկուսն էլ աւելի ասա... Ամա կամաց ասա, որ գրեմ... խոզ Կարապետը... Դէ հմի ասա. յետոյ...

Սկսում էր գուարճալի դառնալ: Այնքան ճիշտ էին պատկերացնում իրականութիւնը, այնքան՝ նման շարժուածքներ, ձայն ու միմիկա էին ընդունել փոքրիկ դերասանները, որ քրքիջներին վերջ չըկար:

Գանգատաւորները ծոծրակնին էին քորում, գլխարկները մէկ թևի տակ, մէկ գագաթի վրայ դնում, մէկ վախեցած ձևացնում իրանց, երբեմն ապուշի դէմք ընդունում և ապշութեան դիմակի տակ՝ կողմնակի աչք թարթում, խորամանկ ժպիտներ ցոյց տալիս հանդիսականներին...

—Գրի՛, արեց մէկը—գանգատաւոր ենք Աման-լը պատողանց քօռ Արշակիցը, Տրեխի-կաշի գոմէշանց Արամիցը, Արաղի-Բոչկենց Ստեփանիցը...

—էդ խօ հինգն էլաւ. նկատեց հանդիսականներից մէկը:

—Բու ի՛նչ բանն ա. բարկացաւ նրա վրայ ստարշինան—կուզի՛. թող տասը ըլի:

Իսկ պիսէրը մի խէթ հայեացքով շանթահարեց խօսող մանուկին և ասաց գանգատաւորին.

—էլի՛ կայ... Դէ հերիք ա, միտս չի մնալ:

—Ծանի միտքումդ ո՛ւր ես պահում. խօսեց կծու

հեգնութեամբ գանգատաւորներէից մէկը—էն ա գրել ես էլի...

—Կըլի որ կարանդաշը ⁽¹⁾ կոտորուել ա՛ չի գրում. ծաղրեց մի ուրիշը:

—Ձեր հօրն ողորմի. ասաց պիսէրը—հրէս կարդամ՝ տես հնց ա գրում... Շուն—ուտողանց Սաքօն... էս վրայ մէկը... Ստարշինա, մէկ մատդ ծալի... ծալեցի՛ր... Հը, հնց ա... կարանդաշս կոտորած ա... Արադ—կոնծողանց Ստեփանը... էս վրայ երկուսը...

—Հա, հա, հա... քրքջացին ամէն կողմից—կարանդաշդ կոտորուած ա, Պետի... ըտէնց մարդ չը կայ...

—Բաս որ ասում ի. արեց գանգատաւորը ծաղրալից և խոնարհ—կարանդաշը որ մի քիչ շատ թքոտէի՛ր՝ ըտէնց չէր ըլլի: Արադի—բոչկենց Ստեփանն ա. համ էլ, էդ վրայ հինգն ա, երկուսը չի...

—Կաց, կաց, շփոթուելուց բարկացաւ պիսէրը—հնց թէ... Թող մէկ տեսնեմ... Ամա հա, տօ... մթնել ա՛ աչքս չի տեսնում... վրայ երկուսը՝ Գորտ—ծեծողանց խոզ Կարապետն ա... էլմա...

—Էլաւ:

—Ստարշինա, բաս մէկ մատդ էլ ծալի... Հմի, աղիս ասեմ, վրայ երեքը՝ Աման-լպստողանց քօռ Արշակը... Մատդ ծալում ես, գոլովա: Վրայ չորսը՝ Տրեխի—կաշի գոմեշանց Արամը. էս մեր ոչ—փուչ Արամն ա... վրայ հինգն էլ Արադի—բոչկենց Տեփանը... Ո՛հ ա, կարանդաշս կոտորած ա...

Ու փքուած՝ ծիծաղեց:

—Է՛տ ա, կարանդաշը լաւ ա գրել:

—Գանգատներդ քանի մանէթի ա, հարցրեց Ստարշինան:

—Մանէթի բան չի, գօլօվա...

—Փիէ. արեց ստարշինան—էդ ի՛նչ գանգատ ա, որ փող չկայ մէջը... Մենք ըտենց գանգատ չենք

(1) Մատիտ. ոռւսերէն բառ է.

ընդունում... ընէնց չի՞, պիտէր, առանց փողի՝ զակօնը չի բանի...

—Ըտէնց ա, դիտեց պիտէրը—ամա կաց տենենք, կրլի՝ որ մանէթի ճոնտը ⁽¹⁾ երևայ...

—Հլա ասէք տենանք աչքը կկոցեց ստարշինան:

Գանդատաւորներից մէկը աւելի մօտ եկաւ, գլխարկը թևի տակն առաւ, պահ մի ծոծրակը քորեց, յիմարի պէս ժպտելով նայեց նրան-նրան, յետոյ խղճալի դէմք ընդունեց յանկարծ ու աղիողորմ ձայնով սկսեց.

—Նրէկ իրիկու չեօլումը մեր տաւարն էինք արածացնում, մէկ էլ տենանք էդ շան-սողերը հարբած՝ Գարկողից են գալիս...—«Բարիկուն»—«Աստծու բարին»... «Ա՛. շան սողէրք, էս ուր էք տաւարը վեր թողել մեր հարողները»¹⁾... «Փիէ, ինչի՞ պիտի սա ձեր հարոցը ըլի, սա Կուլտոնողանց հարոցն ա»...—«Ա՛. շան սողերք, դուք չէք իմանում որ Կուլտոնող աղէն մեզ ղօռուղի ²⁾ ա դրել»... Ու տո՛ւր որ կը տաս. փէտենքը քաշեցին, մեզ մի լաւ դնքսեցին... իրանք էլ ծիծաղում էին... էլ կնիկ, էլ հօր գեօռ... մի լաւ ջարդ ու խուշ արին ու ծիծաղելէն գնացին... Բա Ասուած վեր կառնի, որ էդ հարբան շները մեզ ծեծեն...

—Կաց, կաց, տօ... աչքը բարկութիւնից կկոցեց Ստարշինան—ո՛ւր էիք բաս ձեր տաւարը Կուլտոնող աղի հարողները վեր թողել, ադա...

—Դէ ի՞նչ անէինք, տաւարը քաղցած, խոտ չըկար... համ էլ ախր նրանց ի՞նչ բանն էր... սո՛ւտ էին ասում թէ դօրուղի են... հարբել էին, լակել Գարկողումը. Մեղրոտ Գիգօլի հետ շան նման լակել...

Բարձրացաւ ընդհանուր քրքիշ: Մեղրոտ Գիգօլ ասելով՝ գանդատաւորը ստարշինային էր ակնարկում: Ամէնքը կռահեցին:

(1) Ծայրը. (1) խոտանոց, դաշտ, ուր խոտ են անցնում և կամ յատուկ պահպանում են, ձմեռուայ խոտի պաշար հաւաքելու համար: (2) Դաշտերի պահպան.

—Ո՛ւմ, ում հետ... դէմքը կնճռեց ստարշինան:

—Մեղրոտ Գիգօլ շան տղու հետը...

—Ադա էդ ո՞վ ա, որ ես չեմ ճանաչում... ճշաց ստարշինան—գու գիտեա, պիսէր...

—Ո՛նց չէ, գօլօվա, էդ մի շունն ա, որ սկի օյաղ չի ըլում. ողջ օրը հարբած, խոզի նման թաւալ-թաւալ... ընէնց հարբում ա, որ կնիկն ա շորերը հանում ու մի չիւլի սաւկ քցում՝ որ մրափի...

—Փիէ... արեց ստարշինան—էդ ի՞նչ խոզն ա, տօ... Ամա դէ էդ թող մնայ հլա... Հա (դարձաւ նա դէպի գանգատաւորները) բաս ասում ես է՛ն շան-տղերը...

—Մեզ լաւ զխկեցին, ուշունց տուին...

—էդ հէ՛չ... ծեծել են՝ թող ծեծեն. հմի քանի մանէթի ջառմա (1) էք ուզում որ կապենք:

—Չմսի, ծիծաղեց պիսէրը—հրէդ այ, մանէթների ճոնտը երևաց...

—Հա շատ... խօսեց գանգատաւորը—ընէնց զխկեցին, որ հարուրն էլ քիչ ա...

—Ամեն մէկիցը...

—Թող ըտենց ըլի, մեզնից ի՞նչ ա գնում որ...

—Գրի, պիսէր... հինգ հարուր մանէթ...

—Բա իրանց չէ՞ք բռնոտել տալու:

—Ո՛նց չէ... մի լաւ էլ կը դնքսենք... Ամա խօ գիտէ՞ք զակօնը... Պտի դուք էլ 50 մանէթ տաք:

—Ո՛նց տօ... մե՛նք ընչի պիտի տանք:

—Ձաւոնն ընէնց ա. 500 մանէթի ծախսը 50 մանէթ ա... էդ փողին ո՞նց են ասում, պիսէր:

—Ո՛սկոռ... արեց պիսէրը միշտ գրելով իբր թէ—ո՛սկոռ են ասում, գոլովա...

—Տօ չէ, չէ, էդ հայերէնն ա, բաս զակոնը ո՞նց ա ասում. ո՞նց պիսէր ես, որ միտդ չի:

—Բո՛ւ... ձայնեց Պետին—ընչի՞ միտս չի. օխտը

(1) Տուգանք:

հազար զակօնի գրքերը հրէն փորձումս, բա է՞դ էլ չիմանամ... զակօնը. է՞դ ոսկոռին ասում ա «արուն»...

— Է՞դ խօ հայերէն ա. նկատեց Քանազը— եանի թէ արուն. որ կտրեն՝ արուն ա գալիս...

— Այ թէ գիտես հա... ծիծաղեց պիսէրը— էն որ կտրում են, էն արուն ա, էս՝ արուն ա... արունը ուրիշ ա, արունը ուրիշ... Ձեր խելքի բանը չի զակոնի խօսքերն իմանալը...

— Ինչ որ ա... միջամտեց ստարշինան— 50 մանէթ պտի տաք... տաս մանէթ էլ մեծիւրի փող, մի-երկու մանէթ էլ փրաւինու (2) ծախսը... Տուէք տենանք...

Գանգատաւորները սարսափահաղնների դէմքեր ընդունեցին և միմեանց նայեցին:

— Փիէ... ձայնեց մէկը— համ ծեծը ուտենք...

— Նրանք էլ ծեծ կուտեն. վրայ տուաւ Տելօն:

— Համ էլ փող տանք...

— Նրանք էլ կը տան:

— Մէզ կը տան:

— Ո՞նց՝ չէ. ծիծաղեց պիսէրը— ջառման որ կայ՝ խազնինն⁽¹⁾ ա, ձեզ նրանից մի կոպէկ էլա չի հասնի:

— Բաս մեր 50 մանէթը...

— Էն՝ էլ խազնին կերթայ... թէ գնաց...

— Բա ըտէնց բան էք տեսել, ա խալիւր... ճշաց գանգատաւորներից մէկը— չենք ուզում, էլ գանգատաւոր չենք...

— Ո՞նց թէ չէք ուզում. գոռաց Տելօն— տօ զակօնին ձեռք էք առել. զակօնի ձեռքը որ ընկաք, էլ ազատում ունիք. պիսէրը որ գրեց՝ պըծաւ... էլ հմի ուզէք— չուզէք՝ դուք էլ էք զակօնի ճանկն ընկել, նրանք էլ... փողը պիտի տաք... իմացաք...

— Տօ իմացանք, իմացանք... ամա դէ չենք ուզում է՞դ զակօնը...

— Ձէնդ, հարամգահա. ո՞նց ես ջուռոտաթ անում...

(2) Правление. վարչութիւն. (1) Պետական գանձարան:

հանէք շուտ 50 մանէթն ու ունդ ըլէք... հանաք-մաս-
խարսթէն ա... Պիսէր...

Սոսկալի էր այդ միջոցին «օրէնքի հսկողը»... աչ-
քերը ոլորում էր, քիթն աւելի շուտ-շուտ վեր քա-
շում, ձեռքի ճիպոտով ոտն ուժգնութեամբ ծեծում:
— Հրամայիր, ստարշինա...

— Պրէզիստանի (2) գրի քեօխվին, որ առաջ էս
շան տղերանցիցը բռնի 100 մանէթ առնի, յետոյ էլ էն
հարբաններին բռնոտի, ձեռքն ու ոտքը կապի ու մեր
հրամանոց դիւանխանէն ղրկի...

Ամէնքը լուռ էին, գանգատաւորները կծկւած՝ մի-
կողմն էին քաշուել, իսկ Քանազը ուրախ ժպիտ դէմ-
քին՝ շարժուեց տեղիցն ու սրան—նրան նայեց: Հերթը
իրան էր գալիս այժմ: Տազին իսկ առաջ եկաւ. բեմ
դուրս գալու ժամանակն էր:

Պետին իր փայտի ծայրովը մի քանի բան խազխը-
զեց տերևի վրայ ու տուաւ Քանազին:

Սա դէմքը կնճռեց իսկոյն, գլխարկը ետևից առաջ
բերաւ, ուշադրութեամբ նայեց տերևին, մի «հըմ» ար-
ձակեց, ոտքի ելաւ, չուխի ծայրերը ժողովեց ու խիստ
դէմքով կանչեց.

— Էյ, գզիր...

— Հրամայիր, քեօխվա.

Ճիշտ Դուզանի գզիրի նման՝ երկար փայտ ձեռ-
քին, կծկուած, ամենատխմար դէմք ընդունելով և ժրպ-
տուն՝ առաջ եկաւ:

— Էս սհաթիս, կանչեց նրա վրայ Քանազը—գեղա-
մէջ կերթաս, մէկ—մէկ կը ձէն կրտաս էդ հարբաններին,
որ էս նմուտիս (1) մեր հրամանոց դէմը դուրս գան...
գանգատաւորներ, ադա, 100 մանէթը մինչև էգուց կը
բերէք՝ կը բերէք, չէք բերի՝ էլ տաւար չեմ թողալ գո-
մերումդ... Գնա, գզիր...

— Հինգ հոգուն էլ կանչեմ, քեօխվա,

(2) հրաման. 1) Բոպէ:

—Հինգին էլ:

—Բա որ ինձ դնքսեցին:

—Թող հլա մէկ դնքսեն... ընէնց շառմա անեմ,
որ սաղ տարին քաղցած գլուտան:

—Բա իմ ջիւը ինչ կը մտնի:

—Գնա՛, շան տղայ, կարաս՝ ջիւդ լցրու. թէ քոթակ
էլ տան՝ գգիւր ես, պիտի զակօնի հրամանը կատարես:

—Բա որ չգան, քեօխ՝վա...

—Տօ ես էլ հէնց էն եմ ուզում որ չգան է է...

Տազին ծոծրակը քորեց քիչ ու մտաւ մանուկների
մէջ: Իրարանցումն ընկաւ: Խաղը կենդանանում էր:

IV

Ասպարէզը դեռ գգիւրինն էր: Նրա խղճիցն ու ճար-
պիկութիւնից էր կախուած գործունէութեան ձեւը: Պի-
տի ասել, որ Տազին պատուական, «ամենալաւ տեսակի»
գգիւր հանդիսացաւ. ոչինչ չխնայեց, ոչ ոքի չխնայեց:
Համարձակ գնաց ամենավերջին մանուկներին, կան-
գնեց նրանց առաջն ու գոչեց.

—Ադա՛, էյ, Աման-լպստողանց քօռ Արշակ, քեօխվէն
քեզ կանչում ա, վեր կաց... Դո՛ւ էլ, Տրէխի-կաշի
Արամ. քեզ էլ ա ուզում, Արաղի-բոչկէնց Տեփան...

—Վայ, ձայն տուաւ առաջինը—հէնց մեզ տեսար,
ա՛ շան տղայ...

—Ուշուց մի տալ զակօնի հրամանը կատարողին.
ձեաց ներշնչաբար Տազին—վեր կաց գնանք:

—Ձի՛ ըլի Տազի. ասաց երկրորդը—չի՛ ըլի, որ գը-
նաս ասես թէ գեղումը չեն, չգտար...

—Ո՞նց կըլի, ադա՛, քեօխվէն կաշիս կը պլոկի:

—Տօ գնա ասա քաղաք են գնացել, էլի...

—Ձի՛ ըլի, չէ, վեր կացէք... Դո՛ւ էլ, Շուն-ուտո-
ղանց Սաքօ... Դո՛ւ էլ, գորտ-ծեծող Կարապետ:

Հինգ մանուկների մի առ մի մատնանիշ արաւ և

նրանք, ըստ երևոյթին, ընդունեցին խաղը։ Ամենքը ծիծաղում էին։

— Ես չեմ ուզում, կորի դնա. ասաց մէկը։

— Եմանի էդ խաղ էլաւ. արեց Տաղին դերից դուրս գալով։

— Տօ ես չեմ Սաքոն, հրէն ա՛յ, նրա անունն ա Սաքօ։

— Ադա, եմանի ես քօռ եմ. հէնց դու ես որ կաս շուն-ուտողանց Սաքօն... վեր կացէք ասում եմ է՛ է, թէ չէ, էն Աստուածը, կերթամ կասեմ թէ չեն դալիս...

— Փիէ, արեց մէկը — գալիս ենք, գալիս, հը'... ա՛յ ես քու քիւրդ Տաղի ասողին հա՛,

— Ադա, եկէք առաջ սրան մի լաւ դնքսենք. առաջարկեց մէկը։

— Ի՞նչ, ետ քաշուեց գզիրը բաւական վախեցած — զակօնի հրամանը կատարողին։

— Տօ զակօնս որն ա, եմանի չենք իմանում որ հողիներս հանելու էք... ինչի՛ ա կանչում քեօխվէն։

— Ծեծել էք Սրապին, Մուկուչին, Գարօին...

— Սուտ են ասում, մենք սկի նրանց երեսը չենք տեսել։

— Էտ իմ բանը չի. արեց Տաղին — ստաղշինան թուղթ ա գրել, որ քեօխվէն ձեր ձեռքն ու ոտը կապի՝ զրկի դիւանխանէն, Քարկող։

Եւ մինչ բացատրում էր, յանցաւոր համարւողներից մէկը ոտի ելաւ, մի կողմը քաշեց գզիրին ու ժպտելով ասաց.

— Զի՛ ըլի, Տաղի, որ մի — մի բան տանք քեզ ու առդ ըլեա գլխիցս... Ը'հը, մի մանէթն ինձնից։

— Փիէ, հնց կըլի. ասաց գզիրը խորամանկութեամբ — բա դնամ ի՛նչ ասեմ քեօխվին... համ էլ, անրժի մի մանէթի համար...

— Տօ ըհը, երկուսը տամ։

— Զէ՛, Կարապետ, ինձ փորձանքի մէջ մի՛ քցիլ։



—Տօ ասա հիւանդ ա, մեռնում ա. եա թէ չէ. Կարապետը հրէն չեօլումը... մի բան գտի էլի... Երեք մանէթ կը տամ:

—Ձէ', չէ', արեց գզիրը քիչ կակղացած, սակայն գլուխը երերցնելով—որ գեղումը չըլէիր, եա Սարճէն, Հասար գնայիր... Երեք մանէթն ի՞նչ գատ ա, որ իզուր քեօխլի ուշունցներն ուտեմ...

—Ադա, ի՞նչ գելն ես... բա ուզածդ ի՞նչ ա, որ պոկ գաս եսխիցս:

—Դէ ես ի՞նչ եմ ասում, Կարապետ. վեր կաց գնանք ու ս'կի մի կապէկ էլ մի տայ... Հինգ մանէթն էլ հլա քիչ ա էն ուշունցների համար, որ պիտի լսեմ... Մէկ էլ տեհար դամշին հէնց վրայ բերեց ճր...

—Փո՛ւ ես քու... տօ բաս հինգ մանէթ ա ուզածդ:

—Ձէ, մեղայ Սատուծու, ես սկի կապէկ չեմ ուզում, որ գաս գնանք. հազըր հինգ մանէթը ջրումդ կը մնայ:

—Տօ դիտում եմ, գիտում, քիւրդի լակոտ... Ըհը 5 մանէթը, եսխէս բաց թող...

Գզիրը երեսը շուռ տուաւ ու ձեռքը պարզեց: Կարապետը նրա բռան մէջ իբր փող՝ մի տերև կոխեց: Տաղին ծուռ հայեացքով ստուգեց որ ափի մէջ եղածը հինգանոց էր, գրպանը կոխեց, ծոծրակը բորեց ու ասաց.

—Եսնի Կարապետ', գնամ քեօխլեն ի՞նչ ասեմ հմի:

—Տօ ինչ կուզես՝ ասա... Ես գիւղումը չեմ, գնացել եմ Հասար՝ բանելու, ամիսներով չեմ գալու... Գնացել եմ Լալի գեղը եղ ու պանրի...

—Լաւ ա, ըտհէնց կասեմ: Ամա տես, իմ տրեխացուն դո՛ւ պիտի տաս հա... Հրէն ա՛յ, դռանդ առաջ կախած մի ջուխտ կաշին իմն ա:

—Փո՛ւ ես քու... Ըհը', էն' էլ քեզ, առ...

—Այ՛ սաղ ըլես... Գնամ գնամ ասեմ գիւղումը չես: Ասաց Տաղին, երեսը շուռ տուաւ գնալու, սակայն իսկոյն դարձաւ և ժպիտը դէմքին՝ աւելացրեց.

—Բա Կարապետ, էն տարին դու խոստացար երկու

կոտ ցորեն... Էն էլ չեմ տայ. կալը խօ պրծել ես:

—Տօ երբ էի խոստացել, այ քիւրդ... Թալանելու ես ինձ:

—Ինչի՞, մագամ կս դաշաղ եմ... Կուզես մի տայ. ամա որ քեօխվէն ինձ դամչիեց ու էլհետ ետ ղրկեց, էն վախտը մնց անեմ...

—Վայ ես քու... ադա, բաս էլ ուր առար մանէթ-նեբը, տրխացու կաշին:

—Կուզես ետ տամ, ախպէր... քեզ խօ լաւութիւն չի ըլում անելը. երկու կոտ ցորնի համար հօրս էլ գեօ-ռիցը կը հանես:

—Ա՛ հարամգադա, ցորենը չեծլիցն եմ գտել. բա դու խիղճ չունես, որ էլի բան ես ուզում...

—Ինչի՞ ուզեմ, չեմ ուզում: Քեօխվէն ինձ ղրկել ա որ քեզ կանչեմ՝ անում եմ. չես ուզում գայ՝ զնամ ասեմ թէ չի գալիս, համ էլ ինձ ուշունց ա տալիս:

—Տօ առ, արի, արի ցորենը տար. արի թալանի, պրծիր, տունս սաղ դարտկի... ձեր քօքը կտրուի, քոնն էլ, քեօխվինն էլ, ստարշինին էլ...

—Փիէ, փիէ... Էդ խօ ընէնց ուշունցներ տուիր, որ թագա ծնած գառներիցդ մէկն էլ որ տաս՝ էլի դու պարտք կը մնաս... Ամա՛, հանաքը դէնը, Կարօ, էն օրը գառներդ տեսայ. լաւն են հա... քէֆս եկաւ. ի՞նչ կըլի որ մէկը բախշես աղջկանս, հետը խաղայ:

—Տօ կորի է է՛. կորի, քանի կողքերդ չեմ ջարդոտել. քիչ ա մնում կնիկս էլ քաշ տաս տանես:

—Կնիկ ի՞նչ եմ անում, մէկը շատ եմ կարում պահի... Ուզածս մի գառն ա, ի՞նչ մաթահ գադա, որ ըտէնց կատարում ես... Հրէս, Ս. Գէորգի օրը ա գալիս, կը տանենք մատաղ կանենք,.. Սս էլ քեօխվին կասեմ, ընենց կանեմ, որ աչքին էլ երեաս՝ մոռացած ըլի,.. Դու էդ գառը տուր, մի քիչ էլ—շատ չեմ ուզում, երկու բլուկ—խոտ էլ հարոցիցը, որ ուտացնեմ գառան, չաղանայ ու լաւ մատաղացու ըլի... Հը՞, սրան ի՞նչ կասես, Կարապետ... Աստուած գիտի, ընէնց անեմ, որ

քեօխվէն հետդ նստի—կանգնի ու մոռանայ թէ քեզ սուդ են կանչել, եա թէ դու հարբել ու մարդ ես ծեծել:

Յանկարծ Կարապետը խղղկատակ դէմքով դէմքը ծրմռեկեց, գլխարկը ուժգնութեամբ դետնին խփեց, ու վտանգի մէջ եղած մարդու նման՝ սկսեց գոռալ.

—Հասէք, ա խալխը, Աստուած սիրողը հասնի, զըզիրն ինձ թալանեց, տունս դարդկեց...

—Հա՛, հա՛, հա՛... քրքշաց Տաղին—ամա՛ հանաքչի ես ըլել հա՛, Կարօ... Տօ էլ ուր ես գողգողում, սաղ գեղը գլխիդ հաւաքում: Եանի ի՛նչ ա ըլել, քեզ թալանեցի՞. տարածա մէծ բան ա—Տ մանէթ, մի ջուխտ տըխացու, երկու կոտ ցորեն, մի գառը, երկու բլուկ ¹⁾ խոտ... հը... հլա ուճի (2) չես, որ սիւնից կախած էն չուխէդ էլ չեմ ուզում... իմը քրքրուել ա... բա որ քեօխվից, ստարշինից, պիսէրից, պրիստաւից ու նաչալնիկից ազատուելո՞ւ ես... էդ քի՛չ բան ա... ի՛նչ ա, եանի չուխիդ հետ մի փափախ էլ չեմ տայ, որ գլխիս ծածկեմ...

Ու այնքան բնական էր Տաղին այդ միջոցին, այնպէ՛ս լաւ իրան վիրաւորուած էր ձեացնում և դիմացիներն յանդիմանական շիշտովը ճնշում—որ ամէնքն անխտիր՝ երկար ծիծաղեցին:

—Ադա՛, կանչեց մանուկներից մէկը—ըսէ՛նց դորթ զգիր սկի՛ տեհել չէի. մեր Սահակին կը ծալի ու ջիբը կը դնի:

—Կասես ջլի՛ս Քարկողի զգիրն ըլի տօ. նկատեց մի ուրիշը—տեհել եմ. էդ նա ա, որ ըսէ՛նց՝ համ եղ ա քսում գլխին, համ էլ մազերը մէկ—մէկ պոկոտում...

Պահ մի խաղը դատարեց, տեղի տալով Տաղիին ուղղուած ընդհանուր հիացմունքին:

Սակայն, դեռ ամեն ինչ չէր վերջացել: Իրան է,

¹⁾ Կազմուած գուցէ «բլուր» բառից. նշանակում է դէզ-

²⁾ համաձայն

Տազին միւս յանցաւոր համարուածներին թողեց առայժմ, բայց նա այդ բացատրեց, երբ հեռանում էր:

— Հիւ կաց էս մէկի համար քեօխվին իմաց տամ, յետոյ կը գամ մնացածներին:

Ասաց ու քայլեց դէպի քեօխվէն: Ճանապարհին նա տրեխներէ կաշին (երեւակայական անշուշտ) պահեց խոտերի մէջ, ցորենի տոպրակը տարաւ իրանց տուն (այդբոլորը ձևացրեց նա), փողը թաշկինակի ծայրին պինդ կապեց ու գլխարկի տակը դրեց, յետոյ մտախոհ՝ մօտ գնաց քեօխվին ու լո՛ւռ կանգնեց նրա առաջ:

Քանազը պաշտօնական կերպարանք ստացաւ անմիջապէս և հարցրեց.

— Հը՞, գզին, բերին:

Տազին նախ յիմարի պէս ատամները ցոյց տուաւ քիչ, յետոյ դժգոհ դէմք ստանալով՝ ասաց.

— Չբերի, քեօխվա... Առաջ Գորտ-ձեծողանց Կարապետի տունը գնացի... Շորագեալից¹⁾ 10 մեշուկ լաւ ցորեն էր բերել՝ դարսում էր, կնիկն էլ ոչխարի պանիր էր աղում... Տան առաջը սաղ բռնել էին գառներով...

— Ադա՛, քեզ բա՛ն եմ հարցնում. բարկացաւ քեօխվէն—ընչի՞ չեկաւ:

— Բա ես ո՞նց անեմ, քեօխվա, դէմքը երկարացրեց գզինը... ցորենը բուռս առի, ընէնց լաւ ցորեն ա ո՞ր... մարդը գործ ունի... հիւ թաղա չուխա էլ ա առել քաղաքիցը...

Քանազը մէկէն փոխեց պաշտօնական խիստ կերպարանքը, շուրջը նայեց, ապա կուացաւ դէպի Տազին ու աւելի ցած ձայնով հարցրեց.

— Ադա զո՞րթ ես ասում... Եանի տէսար, Շորագեալու ցորեն էր...

— Էն Աստուածը... ընչի՞, քժո եմ... համ էլ տանը մէշուկ, վիքը, տուգանվէն...

¹⁾ Շիրակ գաւառը
Նոյեմբեր, 1905.

— Փիէ... հլա գնանք տենանք մէկ...

— Վա՛յ, չէ, քեօխվա՛, չգնաս. գազազած¹⁾ ա՛ն
 Եւ կռանալով դէպի նա, խորամանկ ժպտով աւե-
 լացրեց.

— Ինձ երկու մանէթ տուաւ... ուզում ա մի կերպ
 պրծնի. գործի տէր ա խեղճը, ի՛նչ անի:

— Ադա էդ ի՛նչ ես ասում... էդ ռըդիան ա գտել
 էդքան փողը... բաս դնա սարքի տենանք: Ա՛յ, 20 մա-
 նէթից պակաս չըլի հա... հինգ կոտ էլ ցորեն... որ մի
 կէս փութ էլ պանիր առնես՝ մի-երկու կտորը քեզ:

— Էդ շա՛տ ա, քեօխվա: Զի՛ տալ. մէկ էլ տեսար
 ասաւ թէ՛ «կերթամ դիւանխանա՛»... ու գնաց. յետոյ,
 ձեռքդ ինչ կ'ընկնի... Հլա ստարշինան էլ ա պոկելու:

— Տօ ի՛նձ ինչ. ես իմը կ'առնեմ, ստարշինան ու-
 զում ա, թող կաշին պլոկի:

— Բա պրիստամւը, սուղեքը, պի՛սէրը...

Ադա, նրանց ցաւը մեզ են տուել... ինչ ուզում
 են թող անեն. քանի հլա չեն սկսել, թող լաւ պատառ-
 ները հաղըր մեզ հասնի... Էտ ա, 20 մանէթ, 5 կոտ
 ցորեն ու կէս փութ պանիր. կարաս՝ մի հատ էլ գառը
 պոկ տու՝ տանենք մէշէն, քէֆ անենք:

— Դժար թէ ըլի, քեօխվա. ծոծրակը քորեց Տաղին

— արի 10 մանէթի ու 2 կոտի կապենք... հլա մէկալոնք
 էլ կան. նրանցից էլ մէկ էդքան կ'առնենք՝ ու մի լաւ,
 եղալի գործ կը դառնայ:

Քեօխվան ժպտուն՝ քիչ մտածեց, յետոյ ասաց.

— Ադա, քիւրդ Տաղի, եանի դըռւստ, հէնց երկու
 մանէթ առիր...

— Աստուա՛ծ, երկինք...

— Յորե՛ն, պանի՛ր...

— Մեղայ Աստծոյ... որ ուզեմ էլ—կը տայ...

Քանազը ոտքի ելաւ:

¹⁾ Սաստիկ կատաղած:

—Հլա գնանք մէկ ինքս տենամ ի՞նչ կանեմ. ասաց նա:

—Վայ, չէ, քեօխվա, դէմը փակեց Տազին—որ գնացել ես՝ կը կատաղի. մէկ էլ էն տեհար՝ թարսուեց ու դիւզ—դքա ստարշինան գնաց. էն վախտն է՛լ զադ չի ընկնի ձեռքդ. դիփ ստարշինան կուտի:

—Ադա դորթ ես ասում... Բաս դու գնա, տենանք ոնց կը սարքես... ինչքան կարաս՝ պլոկի հա...

Եւ ո՛վ գիտէ, յետոյ ինչ՞ պիտի լինէր, քեօխվէն, ստարշինան և այդպէս՝ փոքրից մինչև մեծը ինչպէս պիտի թալանէին, մերկացնէին գիւղացիներին—եթէ մի միջնադէպ վրայ չգար և քարուքանդ անէր խաղը, ոչնչացնէր ամեն ինչ:—

Յանկարծ լեռնալանջի միւս մասից մի խուպոտ, մի այլանդակ աղաղակ ուռմբի նման եկաւ ընկնելու մանուկների մէջ:

—Ա՛ շան տղերք, ա՛ բեհայեաներ՝, ա՛յ ես ձեր...

Դարձանք սարսափահար: Մի ինչ որ մարդ, ահագին փայտը ճոճելով, կարտուզը պինդ կոխած գլխին, չուխի ծայրերը գօտկի մէջ՝ կատաղաբար վազում էր դէպի մեր կողմը և հայիոյճւմ, հայիոյճւմ...

Մանուկներն ահաբեկ՝ ոստնեցին, վարկենապէս ամէնքը լեղապատառ՝ նետուեցին ամէն ուղղութեամբ, իսկ Տազին սոսկումով ճչաց.

—Ադա, քեօխվան ա, տաւարնին հարոցներն են մտել, վազէք...

Յիրաւի, երբ վեր նայեցի, ի՞նչ տեսնեմ... Տաւարները, բլուրներից, կարծես խօսքը մէկ արած, խմբովին իջել—մտել էին գիւղացոց խոտանոցներն ու ախորժակով հնձում էին պարարտ խոտերը:

Քեօխվան, որ երևի գիւղից անցելիս տեսել էր այդ, կատաղած, փրփրած, ցուպը սպառնալից երեքեցնելով վազում էր ջարդելու փոքրիկ նախրապաններին, որոնք

գունդ ու կոր՝ սրանում— փախչում էին ամէն ուղղու-
թեամբ:

Սրա-նրա ետեից ջանաց հասնել ահարկու իշխանը,
փայտը զլխի վրայ պտտցնելով քանիցս նետեց այս ու
այն փախչողի ետեից, հայոյեց խողային ճիչերով...
սակայն ո՛չ ոքի հասնել չկարողացաւ:

Քիչ յետոյ մնացինք ես ու ազլիկները:

Սրանք էլ ոտքի էին ելել: Նայեցին ինձ, ծիծաղե-
ցին և ճիպտոսները վերցրած՝ գնացին դէպի սագերը:

Նւ երբ իջել խճուղովրայ՝ դէպի ետ էի նայում
— տեսայ դեռ ևս խուսափող ոտներ, կատաղութիւ-
նից փայտը այս-այն կողմ նետող քեօխլին, որ փորձում
էր գոնէ մէ՛կին ծեծած լինել. բարձրանում էր բլուր-
ներն ի վեր, իջնում ծործորները... Նրա առջևից, գըն-
դակներէ՛ նման արագ գլորւում-անհետանում էին մա-
նուկները, իսկ սագերը սարսափահար, ճիչերով ու
թևերի թափահարումներով՝ սահում էին դէպի վտակը...

Սարալանջերն ամայացան. քեօխլի չոր, այլանդակ
ստուերն էր միայն, որ երբեմն երևում էր այս-այն
կողմ, նման հօտի մէջ աւեր սփռող կատաղած գայլի...

Վ. Փափագեան